

Հյուրանոցային համալիրի ստեղծում Հրազդանի կիրճում

Ծրագրի նկարագիրը



Ծրագրի նպատակն է Հրազդանի կիրճում ստեղծել յուրօրինակ լուծումներով հյուրանոցային համալիր և գործարար կենտրոն, որն առաջարկում է գրասենյակներ, 200-ից ավելի հարմարավետ համարներ,ռեստորաններ, սրճարան, բար, լողավազաններ, բազմաֆունկցիոնալ դահլիճ, ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղեր: Մեծ ապակյա վիտրաժների շնորհիվ համալիրի բոլոր կողմերից տեսանելիկլինի երևանյան համայնապատկերը:Տարածքի հարակից մասում զարգացած են զբոսաշրջային և տրանսպորտային ենթակառուցվածքները: Շինարարության համար նախատեսված տարածքը հարմար է հասարակական ծառայությունների ցանցերի մատչելիության տեսանկյունից:






***Տեխնիկական
ցուցանիշներ***

Հողատարածքը կազմում է 9000քմ, հյուրանոցային մասը՝ 21.355քմ, գրասենյակները՝ 1536 քմ: Նախատեսվում է ավտոկայանատեղի208 մեքենայի համար՝ 11.188քմ մակերեսով:

Հյուրանոցային համարների քանակը՝ 210:
Հարկայնությունը՝ 17 հարկ:



**Ծրագրի
ժամկետները**

Շուրջ 3 տարի:



Ծրագրի արժեքը

Շուրջ 6 մլն ԱՄՆ դոլար:

**Ներդրումների ձևը
և հիմնական
պայմանները**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի հողատարածքների իրավական կարգավիճակի մասին ներդրողին տեղեկատվության տրամադրման, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում:

Ներկա իրավիճակ

Առկա է հայեցակարգային նախագիծ, էսքիզներ: